ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«29» օգոստոս 2023 թ. N 129-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 126- Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հաշվի առնելով «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության՝ երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող ՊՈԱԿ-ներում մշտադիտարկում իրականացնելու նպատակով հասարակական դիտորդական խմբի» նախագահ Մարիետա Թեմուրյանի՝ «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Վաղինակ Տեր-Հովհաննիսյանին խմբի կազմում ընդգրկելու մասին 2023 թ.հուլիսի 26-ի դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 3-ի «Հասարակական դիտորդական խմբի անհատական կազմը հաստատելու մասին» N 126-Ա/1 հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածը լրացնել նոր՝ 11-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «11.

Վաղինակ Տեր-Հովհաննիսյան - «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն»:

2. Մամուլի քարտուղարին՝ սույն հրամանը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում, ինչպես նաև ապահովել հրամանի տրամադրումը նախարարության ենթակայությամբ գործող երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպություններին:

3. Գլխավոր քարտուղարին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում հասարակական դիտորդական խմբի նոր անդամին ապահովել համապատասխան վկայականով:

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2018 թվականի դեկտեմբերի 3-ի N 126- Ա/1 հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ

1. Մարիետա Թեմուրյան - «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
2. Մուշեղ Հովսեփյան - « Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ
3. Հայկ Մկրտչյան – Անհատ անդամ
4. Բելա Շիքարյան - «Մարդու իրավունքների միջազգային հանրություն» ՀԿ
5. Կարինե Դավթյան - «Կանանց իրավունքների տուն»
6. Սերյոժա Օհանջանյան - «Էխո» հաշմանդամություն ունեցող անձանց իրավապաշտպան ՀԿ
7. Արտաշես Սերգոյան - «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ
8. Քրիստինա Բաղդասարյան - ««Ինթրա» հոգեբանական ակումբ» ՀԿ
9. Լիլիթ Գևորգյան - «Առողջապահության քաղաքականության և նորարարության կենտրոն» ՀԿ
10. Ստելլա Չանդիրյան - «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ
11. Վաղինակ Տեր-Հովհաննիսյան - Փինք» իրավապաշտպան ՀԿ: